Դետի խաղաղ խորշերում՝ իղեգնուուաներում, շատ վորս կար: Նրանք հրացանները կրակում ելին: Կուրդյան միշտ թոշելիս եր խփում, ապա Բեսպալիիը անդրավարտիքը հանում եր և մտնում ջուրը: Կոծոծները բռնում ելին նրա վոտքերը: Նա փնչացնում եր և գոռում կուրդին:

— Յեգորկա, կիսեղովեմ:

Կեղտոտ, ամբողջովին փետրոտ կուրդյան, իր չեչոտ զեմքով հրձվում եր ափին՝ պատասխանելով.

— Վոչինչ, վանքը մոտիկ ե, քառասունքի հոգեհանգիստ կտառվիրենք:

Յեթև բաղը դեռ սպանված չեր լինում, Բեսպալիիը կծում եր նրա կոկորդը և ասում:

Հոգեղ պլոկիր:

Վանքից արդեն հեռացել եյին։ Յերեսում ելին  
լեռների սպիտակավուն գաղաթները և վտակների  
կապույտ յերակները։

— Յետ գնանք, — ասաց Բեսպալիխը՝ հետով, —  
բավական ե, վորքան խփեցինք, լափելուց արաքվելու  
չենք հո՛...

Կուբդան, կոշիկները ցեխի մեջ ճլթձլթացնելով,  
մտավ յեղեգնուուը ու այնտեղից անհամբեր գոռզում  
եր.

— Միքիչ ել, Վանշա, միքիչ ել...

Բեսպալիխը թքեց և նստեց ցեխի մեջ խրված  
ծառի վրա։

— Զեմ դաւ, — ասաց նա։

Կուբդան մենակ մնաց։ Շուտով յեղեգնուում,  
մի տեղից, հրացանի պալթյուն լսվեց։ Բեսպալիխն  
ուզում եր գնաւը բայց իրեն զսպեց։ «Դե, գրողը տա-  
նի նրան, — մտածեց նա, — յեթե նրա հետ գնամ, հա-  
վիտանս այստեղ կմնանք»։

— Յեգո՞րկա։

— Հը՞-ը։

— Արի այստեղ, խո-լե-րա-մ-ա...»

Բեսպալիխը չպատասխանեց։ Նա ուզում եր ծխել,  
բայց հիշեց, վոր դեմքը ցանցով պատած ե, և հայնու-  
յեց։ Այն ժամանակ նա սկսեց մտածել այն մասին,  
թե հարկամքոր ե ամուսնանաւ թե դեռ շուտ ե։ Ար-  
դեն քսանչորս տարեկան ե տղան, բայց չի ամուս-  
նացել։

«Արդեն ժամանակն ե», — վճռեց նա։

Բացատում խոտը կոնտակիցն եր, ծառի բնին  
նստած Բեսպալիխը չեր յերեսում։ Նա վորոշեց հան-

զըստանալ և մենակ ուզեռքից։ Գլուխը դեմ տվեց  
ծառին, բադը կրեց գլխատակը, հրացանը՝ վոտքերի  
արանքը և աչքերը փակեց։

Կուբդյան նըան արթնացրեց։ Նա կանգնել եր  
Բեսպալիխի առջե և, թերից քաշելով, ժպտում եր։

— Բավական ե, քննեցիր, կշտացար, գնանք ուխ-  
տատեղին։

## V

Կուբդյան գոհ եր և վորսից, և տաք ու պայծառ որից,  
և հոգնածությունից գոտկատեղում առաջացած կոտը-  
տումից։ Քայլելով կաղամախիների խոնավ բների մո-  
տով՝ նա շվշվացնում եր և, ծիծաղելով, նայում յե-  
տկեց քարշ յեկող Բեսպալիխին։

Բեսպալիխը, ինչպես միշտ՝ ցերեկն արեկ տակ  
քնելուց հետո՝ թուլացել եր, և նրա բերանում մի  
անդուրեկան քաղցրություն եր առաջացել։

— Հայրե, դեպի տուն, — ասաց նա՝ բագերը մի  
ձեռքից մլուսը ցցելով։

Նրանք, ինչպես բոլոր սիրիցիները, յեկե-  
պեցի քիչ են գնում, բայց տոներին հարթեցողություն  
չանելը մեղք եյին համալում։

Առավոտվանից ծխնելուզներից թանձր ծուխ եր  
բարձրանում։ Ծուխը՝ խիտ ու սև շերտով, սողում եր  
դեպի յերկինք։ Իսկույն նկատվում եր, վոր բլիթ ու  
նազուկ են թխում։ Դարպասների մոտ, նստարաննե-  
րի վրա, նստածել եյին զյուղացիները և, ծիելով,  
տնտեսության մասին եյին զրուցում։

Նրանք հագել եյին չթե նոր վերնաշապիկներ,  
վորոնցից ներկահոտ եր գալիս, և վորոնք դեռ տրոր-

զած չեմին և այնպես եյին ցից-ցից կանգնել, վոր,  
կարծես, վողորենու կեղեցից եյին կարված:

Տղերքը, հարմոնիկ ածելով, շարք-շարք անցնում  
եմին գուղով:

Փչացած հարմոնիկը յեղանակները սխալ եր նվա-  
գում: Նրանք ել լուս այս կողքից այն կողքն եյին  
ծոմավում: Բոլորի գեմքն ել լուրջ եր, և մարդ չեր  
հավատում, վոր այդ գնացողները հարբած մարդիկ են,  
վորոնցից ողու հոտ եր փչում:

Տղերքանց յետելից, գալուալ շարք-շարք, ինչպես  
բաղի ճտերը մոր յետելից, գնում եմին աղջիկները՝  
վառ կաշմիրի հագուստներով և ձախնեղ յերգում եյին.

Յես գնում եմ, գնում ճահճուտով

և քեզ ձեռքով եմ անում,

իմ սիրելի սեահոն,

ինչու ինձ ել չես տանում:

Կուբդյան ու Բեսպալիխը բագերը զցեցին ու-  
սուցչի սրահը:

Ուզում եմին հրացաններն ել վայր դնեմ բայց  
Բեսպալիխն ասաց.

— Վերցնենք, վոր ցուց տանք, թե՛ թեև ան-  
դրավարտիքներս պատոված են, բայց բերգանկա ու-  
նենք:

Լվացվեցին և հրացանները կախեցին ուսերից:  
Բեսպալիխը, առանց վորեն ոլտուժառի, կոշիկները փո-  
խեց: Ապա փողոց դուրս յեկան, տղերքանցը բարե-  
վեցին և մտան հարմոնիկ նվացողների շարքը:

Հարմոնահարը գնում եր մեջտեղից և շրթունք-  
ները բերանը քաշած, այնպես եր տանում հարմո-  
նիկը և այնպիսի տեսքով եր նվագում, վոր կարծես

նոր եր սովորում և առաջին անգամն եր նվագում  
ան: Արեգակը փալլիում եր հարմոնիկի ստեղների  
թիթեղների ու կլորիկ զանգակիկների վրա:

Նրանց վատքերի տակ ճիվլիում եր թալի խոտը,  
և ցանկապատերից թիթենու հոտ եր բուրում, իսկ փոք-  
րիկ յեկեղեցում բոլոր զանգակները միաժամանակ  
զանգահարում եմին շտապկու և «կամարինսկու» յեղա-  
նակով:

— Զը՞նդ-դը՞նդ-զը՞նդ, զը՞նդ... զը՞նդ...

Ցերք այսպես լուս ու հաճույքով անցան միքա-  
նի փողոց, հարմոնահարն առաջարկեց.

— Հայրէ Անտոշկի մոտ:

Մի ճշան ձայն շարքի միջից ասաց.

— Հայրէ:

Տղերքը շուռ յեկան դեպի Անտոշկա Սելեղնյովի  
տունը:

Անտոն Սելեղնյովը՝ մի հիսուն տարեկան բար-  
ձրահասակ ու խիստ գյուղացի՝ նրանց գիտավորեց  
դարձասի մոտ: Նա աղել եր կապուլտ պիջակ ու  
անդրավալտիք, վորի ծայրերը կախել եր լարքա կո-  
չիկների վրա: Նա մի այնպիսի ինքնաբավականու-  
թյամբ թափահարեց իր լայն, կոկած ու փակագծի  
ձեռվ սանրած միքուքը, վոր ամենքը քաղցր ժամացին:

Գյուղում նա համարվում եր ամենահարուստը,  
և նրան եմին միշտ յեկեղեցու յերեսփոխան ընտրում:  
Այդ պատճառով ել նա յեր այսոր ամենքին հյուրա-  
սիրում:

Սելեղնյովը տղերքանցը տարավ պատշգամբը,  
մտավ նախասհնյակ, մի ինչ-վոր փայտա բանով բաղ-  
եց և ասաց.

— Մաեք:

Մեկը մյուսի յետեկից մանում ելին տղերքը, միմի գավաթ ողի խմում, միմի կտոր բառնչի կարկանդակ վերցնում, և ով վոր սրանով բավականանում եր, դուրս եր գալս գարպասից:

Կուբդան յերկու գավաթ խմեց իրար յետեկից, դուրս յեկավ պատշզամբ, նստեց և կարկանդակի կտորը կծեց: Նրան մոտեցավ մի շիկակարմիր ու մի աչքանի աքաղաղ:

Կուբդյան կեղեց զցեց նրա առաջ, Աքաղաղն արհամարհանքով նայեց և կամացուկ հեռացավ: Բեսպալիխը ժամաց:

— Զի ուտում, — ասաց նա, — կրթված ե:

Սելեզնյովը, կավե ամանը ձեռքին, դուրս յեկավ պատշգամբ և հարցրեց.

— Ել չեք ցանկանում, տղերք:

Բեսպալիխն ուսերը շարժեց:

— Հետո, Անտոն Սեմյոնիչ: Այս աքաղաղն ինչու չի հաց ուտում:

— Ուտելու ժամանակը նա իմանում ե: Միայն առավոտյան ու յերեկոյան և ուտում: Յերկու անդամ կշտանում ե և վոչինչ:

— Համբերում ե:

— Զի գանգատվում:

— Հրաշալի յե Ռուսաստանը, — բացականչեց Բեսպալիխը: — Արագդ լավլ ե, ծխախոտ ես խառնում:

— Վոչինչ չեմ խառնում, — ասաց Սելեզնյովը՝ տիրաբար բակին նայելով: — Գլուխդ ցավի մշտակ մուտքածություն եր պատճառում նրան:

— Զի ցավում, պտավում ե:

Կուբդյան ասաց.

— Շատ մանգալուցն ե:

— Վարս եյիք անում, — ծուլությամբ հարցրեց Սելեզնյովը:

— Վորս ելինք անում:

— Լի՞-նում ե, — ծոր տվեց Սելեզնյովը և լռեց: Այնուհետ ելին լոկ, վոր, կարծես, մի մեծ ու կարւոր խոստցություն ելին ունեցել: Սելեզնյովը ողին խմեց և մնացորդը թափեց գետին:

— Խմանմ եմ, խմանմ, բայց չի բռնում, — ասաց նա, — նույնիսկ զյուրանում եմ:

Բեսպալիխը խորհուրդ տվեց.

— Անոթի փորով խմիր:

— Ուզում ե, դողերոցքը յեղերվի վրա բաց թողնի: Հը՞-հը, — ծիծաղեց Կուբդյան վոչ այնքան Բեսպալիխի, վորքան իր վրա, նրա գլուխն սկսեց կամաց-կամաց լցվել մշտակ, վոր մի տեսակ ուրախություն եր պատճառում նրան:

Սելեզնյովը նստեց պատշզամբում ու մի գլանակ փաթաթեց:

— Աշխատանիւմ եք, — կես ծաղրանքով հարցրեց նա:

— Աշխատանիւմ ենք:

— Այդպե՞ս... Տներումդ տեղ չկա, ինչ ե: Գետինը չորացել ե:

Բեսպալիխը բռունցքով խփեց իր կրծքին:

— Վորովհեան մենք թափառական ենք... զլիկի ընկածը, Անտոն Սեմյոնիչ:

— Ան ժամանակ գնացեք վորսի, ինչու ուրիշ մոտ ձորտանալ, Յես ձեզ չեմ հասկանում: Ուրիշի ցեխում կեղտոտվել: Ի՞նչ ոգուտ...

Կուբդյան, հանգած ու հարբած հայացքով, բըռսնեց Սելեզնյովի կոնատակից:

— Իսկ դու, սիրելի բարեկամ, հիմարություն մի դուրս տա: Ինքդ գիտես, թե ինչից դրդված և մարդ աշխատանքի գնում, ինչ յեկամուտի պատճառով: Վորովհետեւ, դարձը՝ թի... Ասեմ քեզ, գերմանական պատերազմի ժամանակ յեղել եմ Լեհաստանում, Գերմանիայում եմ յեղել և վոչ միայն իս, այլ և նա, և նա—բոլորս...»

Կուբդյան ցուց տվեց Բեսպալիխին և մի ուրիշն:

— Նայեք,—այ, մարդիկ... Ապրում են, ասեմ քեզ աշխատում: Մաքուր, չոր, շուրջդ մեքենաներ: Նույնիսկ մարդ սպանելու մեքենա յէ շինել քեզ համար, թե ողի մեջ, թէ ջրի վրա, մնացածների մասին ել չեմ ասում:

— Գոնի մի սորի...

— Դու ավելի լով ստախոսիր: Ուժիդ չափ աշխատում ես ու հանգստանում, քեզ ինչ կա վոր:

— Քո դրությունը վատ ե:

— Վատ...—Զարացած խոսեց Կուբդյան. — Անըավական ենք մենք, հասկացմաք: Մենք ել ենք ուղում ուրիշների պես ապրել և վհչ թէ խոզի պոչ լիզել: Ահա ինչու յենք զարդուել մենք...

— Ամեն ինչ միանգամից չի լինում: Շուտով, գիտես, կատուների մասին ասում են...

— Զուր են ասում: Մարդը ծույլ ե, ծույլ և անզգամը: Նրան թողնես, իր փորը քչփորի և իր յեղբոր վրա հաջի: Վոչ, գնւ, լիբր, այրվիր աշխատանքի ձեռքից և լալուց բթացիր, ահա այն ժամանակ կհասկանաս, թե վորտեղ պիտի կարկատանը դնել:

— Իսկ դու սովորցրու: Կուբդյան թռավլ պատղամբից և, ցնցվելով, ծիծաղեց:

— Ինքս խավարի միջով եմ գնում:

— Մնմ և հարկավոր:

— Զինի՞ քո յեկեղեցոց:

Սելեզնյովը ձեռքը քսեց միրուքին՝ կոկորդից գեղի քիթը տանելով, և աչքերով ժպտաց.

— Բոլոր մամերն ել մեկ են, միայն թէ լուսավորին: Դու կարծում ես, թե սրանով ես լավ, յես՝ մյուս սով, բայց միենույն տեղն ենք դալիս:

— Միթե մինույն, Անտոն Սեմյոնիչ:

Կուբդյան բոնեց Բեսպալիխի թերց ու գնաց:

— Նստիր, —ասաց Սելեզնյովը:

— Ավելի լավ ե, գնանք, հովանանք, թէ չետղան բոլորովին թթվել ե, —ասաց Կուբդյան:

Սելեզնյովը բարձրածայն հառաչեց ու վերնատունը վերադարձավ:

Այստեղ նստել և ողի եյին խմում հարեան գյուղից լեկած հյուրերը՝ յուղագործ վարպետը, փոր մի գեր, ճալատ և կծուճածն գյուղացի լեր, ջրաղացպանը, վոր, բոլոր ջրաղացպանների հման, յեկեղեցական ընթերցանության մեծ սիրահար եր և չափազանց կնասեր, սրա աղջիկը և քահանան ու իր սարկավազը:

Սելեզնյովի կինը՝ մի լայներես բարձրահասակ գեղջկուճի՝ հյուրերի համար ողի յեր ածում բաժակները և, ցած կախված փորն որորելով, ասում եր:

— Կերեք, մի քաշվեք, կերեք...

Արձիթում շող եր: Ողուց հոտած ցորենի, հացի խորդենու և ծխախոտի հոտ եր փչում:

Ջրաղացպանը տերտերի ու սարկավագի հետ  
յերկմատյան խաչակնքման մասին եր վիճաբանում:  
Նա մի այնպիսի՝ ականջ ծակող՝ ձայն եր հանում, վոր  
կարծես խրճիթում վեցաչքանի ջրաղաց եր աշխա-  
տում:

Տերտերի քունը տանում եր, բայց գնալն ան-  
հարմար եր, և նա ձեռքով իրենից հեռացնում եր  
ջրաղացպանին.

— Հեռացիր հանցանքից, հեռացիր...

— Ես կապացուցանեմ,—զորում եր ջրաղաց-  
պանը,—կապացուցանեմ կրօնով դավանարանությամբ,  
ամեն, ամեն ինչով...հասկանում ես...

Սաղմոսասացը ձեռքը ջրաղացպանի ուսին դրեց.

— Ի՞նչ ես միենույն բանը կրկնում, զու փառ-  
տեր բեր, թե չե զորոցով հիմարն ել կգերազանցի,  
ապա...

Յուղագործ վարպետը վիճում եր յերեքի հետ ել,  
չեր լսում նրանց ասածները, վոչ ել իրենը, այլ դըռ-  
դում եր անդադար.

— Տերտեր, թեև դունչդ ու հոնքերդ մարգարելի  
յեն, բայց ելի քեզ լսել չեմ ուզում, վորովհետեւ հո-  
գիս ուզում ե ինքն իրեն լսել... Ամեն մարդ ներսում  
իր սոխակն ունի... իսկ զու այդտեղ ինձ սուրբ գրքի  
մասին...

Վարպետը ձեռքերը վերև բարձրացրեց և թափ  
ձայնով գոռաց.

— Որհնյա տե՛-եր...

Սաղմոսասացը տերտերից հեռու ցատկեց և սի-  
րալիր նայեց Անտոնին:

— Փողովուրդը փառահեղ և ապրում:

Անտոնն ամբողջ մարմնում հոգնածություն եր-  
գում:

Առավոտն ու ձաշին յերկար ժամերգություն կար,  
ընդումին, նա պիտի ամենքից առաջ կանգներ և, զգա-  
լով, վոր ուրիշների հայացքներն իրեն են ուղղված,  
պիտի առանձին ջերմեռանդությամբ և առանց շտա-  
պելու յերկրպագեր ու խաչակնքեր. մշակը տեղ եր  
գնացել, և ինքն ստիպված եր անձամբ ջրելու տանել  
ձիերը, խոտ տալ նրանց: Նրա զալրույթը գալիս եր,  
իսկ նա, տոնի պատճառով, չեր կամենում զալրանալ:

Սելիզնյովը բռնից սաղմոսասացի ուսերից, նրան  
նստեցրեց իր կողքին և ասաց.

— Դե, պատմիր, Նիկիտա Պետրովիչ:

Սաղմոսասացը չորացած դեմքով նայեց շուրջը  
և ասաց.

— Տնարար եք դուք, Անտոն Սեմյոնիչ:

— Ուրիշ կերպ չի լինի:

— Մեղանում՝ Ռուսաստանում ալղպես չե:

— Գիտեմ, յեղել եմ:

Սաղմոսասացը ատամները սեղմեց և այնպիս  
հառաչեց, վոր, կարծես, հոգին փչեց:

— Ես ել եմ ուզում տնտեսություն հիմնել:

— Մարգս առանց անտեսության քամի յե:

— Իսկ մնացած՝ ինքնըստինքյան, հը՝

— Ի՞նչը:

— Դե, կյանքը:

Սաղմոսասացը աչքերը խորամանկորեն հառեց  
մի խոշոր ու սևամորուք մարդու և մտածեց. «Խոշոր  
ե քեռին, բայց և խարեբա յի»:

Անտոնը թուլացավ և հոգնած ասաց.

— Ով ինչպես ցանկանում է, այնպես ել կկառուցանի իր կանքը:

— Իսկ աստված:

— Աստված գեղերվա համար և հարկավոր, ցերեկը նրա հետ ապրելու պատեհություն չունենք:

Այդ ժամանակ մի գեղջուհի մոտեցավ Անտոնին և ասաց.

— Քեզ այնտեղ հարցնում են:

— Ո՞վ:

— Միլիցիոներներ են, ինչ են: Հրացաններով են, յեկան յերկծով, գարպասի մոտ են:

Սելիզնյովը նայեց գեղջուհու գունատ դեմքին և անբավական ձայնով ասաց.

— Իսկ դու արդեն թթվել ես:

Յեզ մանրիկ քայլերով, կոշիկները ճոճուացնելով, դուքս յեկավ ու գնաց միլիցիոներների մոտ:

Յերկու հոգի ելին: Նստել ելին արկղանման կառքում և ինչ-վոր բան ելին խոսում իրար հետ:

Շագանակագույն ծիերը պղչերով հոգնած քշում ելին բզզացող բռներին:

Կառապանը, վոր մի շատ ջահել աղա յեր, անիվներին եր նախում:

Սելիզնյովը կարծեց, թէ միլիցիոներները խմելու յեն յեկել, և վարոշեց նրանց ավելի լավ հյուրասիրել:

— Շառա ավելք, — ասաց նա:

Միլիցիոներները նոյեցին նրան: Նրանցից մեկը քաղաքացու ձեռվ եր ածելված՝ վոչ բեղ ուներ, վոչ մորուք. յերկորդը մի բոլորովին ջահել աղա յեր, մազերի զանգուը փունջը գլխարկի վրա սանրած:

Ավելի հասակավոր միլիցիոներն ասաց.

— Դու յես Անտոն Սելիզնյովը:

Նա այդ բառերն ասաց այնպիս, ինչպես դատի ժամանակ են ասում, և այդ հանգամանքն Անտոնին դուք չեկավ: Նա ասաց.

— Յես ինքս եմ:

Միլիցիոներներն իրար յերեսի նայեցին և, արկը ծռելով, աչ կողմից դուքս յեկան:

Արկի մոտ ժողովուրդ եր հավաքվել՝ տղերք, աղջիկներ: Ավագ միլիցիոները նայեց շուրջը և տեսավ կուրզին ու Բեսպալիխին՝ հրացաններով:

— Թուլլավություն ունեք, — ասաց նա նույնպիսի խստությամբ:

— Շատ, — ուրախ սլատասխանեց կուբդան:

Միլիցիոները ձեռքով բռնեց իր գոտկից քարշ ընկած պատճանը: Ալգախի սառը, արձանագրութիւն համար, խոսքեր ասելը, յերեխ, նրան շատ եր դուք դալիս: Նա ասաց.

— Հետո կքննենք: Դուք չեռանաք:

— Լավ, — ասաց Բեսպալիխը: Մենք չե վոր այս տեղացի յենք:

— Իսկ ժողովուրդը թող ցրվի, վկա լինելու աշխորժակ ունեն: Ո՞ւր ե տանուտերը:

Տանուտերն առաջ յեկավ: Մի քնկոտ գլուղացի յեր՝ սատինե վերնաշապկով և առանց գոտու:

— Յես եմ տանուտերը, — ասաց նա գեղջուհու ձայնով:

Միլիցիոները տհաճությամբ ասաց.

— Պետք ե քեզ յերկար սպասեր մինչև վոր բարեհաճես գալ: Հարկավոր ե խուզարկություն կատաւել, ասում են, արագ են քաշում:

— Ով և իմանում,—անտարբեր պատասխանեց տանուտերը:

Քաղաքի միլիցիոներներ ելին և տեսնելով այդ փրչոտ, հարբած, նեղաչյա մարդկանց, վորոնց մեջ, աստված գիտի, թե ինչ մտքեր կան թագնված,—սկզբում միքիչ վախեցան:

Ապա տեսնելով, թե գլուղացիներն ինչպիս շտապով ցրկեցին անգլիական՝ առլուծակերպ կոճակներով՝ շինելուրի ու ֆրանսիական յերկնագույն փաթաթանների առջև, — միլիցիոներներն ուրախացան և, իրենց վախկոսությունը հիշելով, զայրացան:

Կրտսեր միլիցիոները, վոր վարժ չեր հրացանին և փողն անդադար ուղղում եր, բակը մտնելով, գոռաց.

— Այստեղ հարբեցողությունը պարապել...

Նրա գոռոցը գանգատի յեր նմանվում: Նա լրեց:

Ողի քաշելու սարքը՝ յերկու կավե հաստ կճուճ, պղնձի խողովակների մի շարք և մի թիթեղիա ստոցարան՝ գտնվում եր ծածկի տակի սայրի վրա և ծածկը-ված եր բարակ թաղիքով: Այստեղ կար և մի փոք-րիկ տակառ՝ ողիով լիքը: Միլիցիոները գրպանից թուղթ ու թանաքաման հանեց և սկսեց արձանագրություն կազմել:

Ամբոխի մեջ խոսում ելին:

— Տեսնում ես, ուզում են, վոր թագավորական ողի խմենք:

— Իբրև թե առևտուրն ենք խանգարում:

— Քիչ խոսիր:

Զահել միլիցիոները շրթունքները սեղմեց և հոն-քերը կիտեց:

— Տիս, ինչ գործի յեն:

— Ձե՞ն խմում:

Արձանագրությունը կազմելուց հետո միլիցիո-ները հրացանով կոտրաց կճուճները, սվենով ծակ-ծըկեց սառցարանը և ջարդեց պղնձե խողովակները:

Գյուղացիները լուս ելին:

Միլիցիոներն ողին թափեց, կազմվեց մի փոք-րիկ լիճ, ախոռի սևավուն կտուրը փայլվեց, և հողը ծծեց ողին:

Տաք հացի հոտ եր գալիս:

— Այս անամոթություն, — գոռաց մեկն ամբոխի մէջից:

Միլիցիոներն ափսոսում եր և ողուն, և իրեն, վոր այղպիսի վատ գործ եր կտարում: Նա բարկացավ.

— Լոնք, ախմախներ:

Զահել միլիցիոները շարժեց հրացանը.

— Բոլորիդ ել կծերբակալենք:

Ամբոխն ավելի արագ եր շնչում և սեղմում մի-լիցիոներներին, վորոնք արդեն նեղվածություն ելին զում: Ավագ միլիցիոներն սկսեց մայր հայհոլեր, յեր-կորոր վախեցած նայում եր այդ հարբած և արա-գաթարթ դեմքերին:

Գյուղացիները սեղմում ելին:

Միլիցիոներների կրծքին ու կողերին կպան ինչ-վոր ամուր արմունկներ ու ձեռքեր: Ողու և մի ինչ-վոր վատ բանի, կարծես, հոտած յեղեգնի, հոտ ելին վոր վատ բանի, կարծես, հոտած յեղեգնի, հոտ եր փչում:

Արկղասալն սկսեց ճոճուալ դարպասի մոտ:

Ավագ միլիցիոները փորձեց գնալ: Ձեն թողնում: Շրջապատված ելին աչքերով և մարդկային տաք շնչառությամբ:

Զահել միլիցիոները գոռաց: Նրա ձայնը կարճ հնչեց և միքիչ ել խոպոտ: Նրա ընկերն սկսեց հայ-հոյել վոճրագործին վայել յեղանակով. նա հայնոյում եր և նրանց աստծուն, և մորը, և փորը:

Ամբոխի միջից գուրս թռավ մի շարժուն ու փոք-րիկ անձն և խփեց նրա ատամներին: Միլիցիոները բարձրաձայն ճչաց և ատրճանակը յերեք անդամ կրա-կեց ամբոխի վրա:

Հառաչեցին:

Ամբոխը ճեղքելով յետ քաշվեց:  
Միլիցիոներները, կռացած, վազեցին դեպի դար-պասը:

Նրանց գեմքերը քրտնել ելին, թորշոմած ւըն-ձոռաել և կապտավուն սպիտակել, ինչպես կիրը:  
Նրանք թռան արկղասալի մեջ:

Մանուկ կառապանը հի ասաց և ձիերը քշեց:  
Բեսպալիխը ձեռքերը շարժեց:

— Հայ, հայ, հայ ..

Յեկ, հրացանը ուսից իշեցնելով, յերկու փողը միասին կը ակեց նրանց յետեց:

Միլիցիոներներից մեկը գլուխը թափահարեց և ներս պրծավ արկղը:

Կառապանը վախեցած, վոչխարի նման, բարձ-րաձայն ճղղաց:

Կուրդյան ուսից հանեց բերդանկան և կը ակեց ողի մեջ:

Արկղասայն անհետացավ նրբափողում:

Գյուղացիները բակից գուրս լեկան մի այնպիսի զգայութեամբ, վոր, կարծես, յերկար ժամանակ բերա-նով փչել ելին, վոր տաքացնեն:

Բեսպալիխի վոտքերը թուլացել ելին, և նրա աշ-քերը ծակծկվում ելին: Նա կուբդին նախեց, և նրան թվաց, վոր կուբդան, կտսիս, գոհ և:

Բեսպալիխի ականջները խշխշում ելին, և նա արագ քայլերով գնաց վահաքը:

Կուբդյան նրան հասավ կամուրջի վրա և, հա-տակի տախտակներին զիտչող կրունկների թրիկոցի մեջ ընդհատվող ձայնով ասաց նրան:

— Լավ վորս արեցինք:

Յերեկոյան Գորբուշինն ու Սոլոմինիխը լսում ելին,  
թէ ինչպիս եր Բեսպալիխը իրձիթում, վազվելով ու շնչառապո, պատմում այն մասին, թէ ինչպիս քշեցին միլիցիոներին:

Գորբուշինը հիացած ճոճում եր ձեռքերն ողի  
մեջ ու համաձայնության նշան տալիս.

— Նրանց այլպես և հարկավոր... այլպես...

Յել անհասկանալի յեր, թէ ինչու յե այլպես  
բացվել ալդ ծույլ ու քնկոտ մարմինը:

Սոլոմինիխը նստել եր ծնկները ծալած՝ զրդի  
նման, և հեռվից, յուղաճրագի լուսի տակ, կուռքի յեր  
նմանվում:

Կուրդյան քնած եր:

Վանքում յերկարածիք յերգում ելին:

Լեռներում շաշտումով աղմկում ելին մալրիները  
և հնովում՝ ինչ-վոր տեղ, մի բան եր գդրգում: Գուցե-  
սովուներն ելին լալիս», սառցակուլտերը խորտակ-  
վում: Խավարը՝ կատվի կանաչավուն բիբերով՝ պա-  
տուհանին եր նայում:

Պատմվածքի վերջում՝ նախասենյակից ըստ զիսցին:  
Մեկը յերկար ժամանակ, խարիսխիկով, զուռն եր

Վորոնում: Բեսպալիխը լռեց: Մտավ Յեմոշինը և վախեցած ասաց:

— Դատի յին ավել, սրիկաներ... Կուբոյան, ուր և, կուբոյան:

Բեսպալիխն ասաց.

— Քնած եւ:

Յեմոլիխը թռավ գեղի դուռը:

Խավարի միջից նրա ձայնը ուրիշ տեսակ եր հնչում. կարծես այդ ձայնը մի յեր մի ինչ-վոր անսովոր բանով:

— Քնած ե... Մարդ և սպանել և խոմփում եւ վոճագործներ: Տեր սստված, սկզ դրդեց ինձ կապվել սրանց հետ: Հիմա ինձ ել դուրս կանեն վանքեց: Իսկ նա խոմփում եւ Զարթնացնեմ նրան, Յեգորշա:

Սոլոմինիխը հարցրեց.

— Իսկապէս սպանել եւ:

— Տեղնուուեղը: Ուղղակի վիզն և լցրել ամբողջ կոտորակը, ապա, յեղբալրս:

— Կոտորակը և սպանել:

— Վո՞ր սատանան նրան դրդեց:

Յեմոլիխը վազելով մոտեցավ և վոտքով հրեց կուբոյան:

— Վեր կաց, քերթված չմըք,

— Պատանդ կլարեն, — ասաց Սոլոմինիխը, և Բեսպալիխին թվաց, վոր նա, կարծես, ուրախանալով և ասում: — Կամ կլախեն, կամ կդնդակահարեն:

Բեսպալիխին յերկուղը պատեց: Նա պատուհանին նայեց և շուռ յեկավ:

— Յերկուսիս ել:

— Գուցե չորսիս ել:

— Իսկ ձեզ ինչու համար:

— Զեն քննի:

Յեմոլիխը կուբգին թափահարեց և հայհոյեց:

— Վեր կաց, վոճագործ հոգի, տենդ: Մարդավարի յեմ զարթեցնում: Քեզ մարդ և կանչում:

Կուբգի գլուխը պատվում եր: Նա նստեց վառարանի քնջին և հորանջեց: Ծնոտները ճաճուացին:

— Ի՞նչ ես ուզում, կապալառու, — ասաց նա:

— Մարդ և կանչում քեզ:

— Ո՞վ եւ:

Յեմոլիխը մոտեցավ գոանը և գոռաց գեղի խավարը.

— Այստեղ արի, Անտոն Սեմյոնիչ:

Սելեզնյովը խաչակնքեց և բարեկց: Կուբգան վերցրեց փարչը և ֆշացացնելով խմեց:

— Ահա և արագ, տղա, — ասաց նա բավականութեամբ: — Իսկ դու ինչու յս յեկել այս մթնին, քեռի Անտոն:

Յեմոլիխն ասաց:

— Այս սեղն աչքդ, դեռ հարցնո՞ւմ ես: Իղուր տեղը մարդ սպանեցիր, դոնե պատճառ լիներ:

— Ամենքիս վերջն ել մահ եւ, — առաց կուբգան՝ նստելով նստարանի վրա:

— Դե, յս գնում եմ, — շտապով ասաց Յեմոլիխը, — իմ ձեռքերս շաղախելու կարիք չկա: Դուք ձեր ճարը տիսեք: Ինչ ել անելու լինեք, միկնույն եւ, ձեզ կախելու յին:

— Կլախեն, — անտարբերությամբ հաստատեց Սոլոմինիխը:

Լոեցին այնքան, վորքան պատշաճավորությունն  
ե պահանջում, ապա Կուրզիան հարցրեց.

— Սամավար չդնեմ:

— Հարկավոր չի, — ասաց Սելեզյովը, — յես կարձ  
ժամանակով եմ յիկել, Յեկա նրա համար, վոր ասեմ,  
թե ձեզ հարկավոր ե պատրաստիք:

Կուբդյան վատքը վատքի վրա դրեց և առաստա-  
ղին նայեց.

— Ցերկար պատրաստվելու բան չունենք: Ո՞ւր  
պիտի գնալ:

Ճշկուտը:

Բեսպալիխը կրկին հարցրեց.

— Տայգան:

Սելեզյովը լոեց և քիչ հետո ավելացրեց,

— Ինչպես ուղենաք, \*ինձ համար մեկ և Միայն  
թե դուք պիտի գնաք: Կոլչակյանները կղնդակահա-  
րեն: Յես հալիքորել եմ, իմ բնուը բարձգած ե: Հավա-  
նական ե, վոր վաղը գեշերվա դեմ կրան...

— Կդան, — ասաց Սոլոմիխիխը:

— Ճշկուտը գնանք. մեկ և, մենք այս իշխա-  
նության հետ բարեկամանալ չենք կարող: Մեր իշ-  
խանությունը խորհրդակինն ե, գյուղացիականը:

Բեսպալիխը հարցրեց.

— Կարծում ես, վոր նրանք արագ քաշելու իրա-  
վունք կտան:

Սելեզյովը դարձաւ պատասխան չտվից, այլ  
հարցրեց.

— Վարքան քիչ տեղեկություն ունեք:

Վորոշեցին, վոր այս, հարկավոր և ճշկուտը  
գնար:

Սելեզյովը այն ձեռվ դեպի դուռը գնաց, վոր,  
կարծես, ձիերին եր ջրում: Յեվ նրա մեջքը ձիու մեջ-  
քի նման եր, լայն, մեջտեղը նկատելիորեն ակուածե-  
կուրդյան հարզանքով նայեց նրան և, յեր նա  
դուրս լեկավ, ասաց.

— Առողջ ստանա յե և խելքը գլխին:

## VI

Նիլովսկի գավառապետ կարձանասակ ու կար-  
մրաթուշ կապիտան Պոպովը անկեղծորեն դժգոհ եր  
երենից: Աւրիշ գավառներում, կարծես, վոչինչ, հան-  
գիստ եր, իսկ այստեղ կամ ապստամբություններ կա-  
մին կամ գժտություններ:

— Տիմար, կնիկարմատ, — անարդեց նա ինքն  
իրեն և զենչչիկին հրամայեց կանչել պրապորչչիկ  
վիսնեսկուն:

Վերապանալով սեղանի մոտ՝ նա նկատեց, վոր  
եր վատքը մի տեսակ կազում ե: Վատքը զբեց աթոռի  
վրա:

Կրունկը ծովել եր: Պոպովը շոշափեց կոշիկը: Այս  
դրության մեջ գտավ նրան պրապորչչիկ վիսնեսկին:  
Կապիտանն, առանց նրան նայելու, ասաց.

— Առում են, թե մեծ փող ենք ստանում, այն  
ինչ կոշիկ գնելու միջոց չունենք:

Պրապորչչիկը իրեն շատ քաղաքավարի մարդ եր  
համարում և անհրաժեշտ համարեց իսկույն խթանները  
ըրիկացնել և բարեկը:

— Լսել եք, — հարցրեց կապիտանը՝ մատներով  
ցույց տալով սեղանի վրա ընկած թուղթը, — Ռւելում  
միլիցիոներ են սպանել:

Պրապորչիկը շարժեց ծուստիկ ուսերը և մտածեց. «Սանձները քիչ բաց թողնելիր», իսկ բարձրաձայն ասաց.

— Հարբած կլինեն, չեմ կարծում, թե բայլշեկիկներ լինեն,

— Իգուր, — ասաց կապիտանը չորչոր, — թերթերում տեղեկութիւններ են հայտնվել և «ներքին ճակատներից»։ Այդ եւ եք կարծում, թե բայլշեկիկներ չեն: Ե-ե՞... Կյանքի խորքը թափանցելու շնորհը չունեք,

Պրապորչիկը վիրավորվեց:

— Զեր զինվորներից քառասուն հատ վերցրեք և հանգստացրեք այն, Ուլեյան: Իսկատի ունեցեք, վոր հարբածների վրա չեք գնում։

— Դրավոր հրաման կլինի, — հարցրեց պրապորչիկը:

— Կլինի, կգրեն:

Կապիտանը լալիան դեմք ընդունեց և բարձրաձայն հառաջեց.

— Այս, տեր ասաված: Ինչ ժամանակներ յեկան, չես իմանում, թե ինչպիս մոտենաս ժողովրդին: Տանջիում հօ: — Ծխում եք:

Պրապորչիկը ծխեց: Նա գոհ երայդ հանձնարարությունից: Մտածեց.

«Նա չար մարդ չե»:

Հետեւալ որը, կեսորին, լեհական ուլանների մի ջոկատ, պրապորչիկ Վիսնեսկու հրամանատարության ներքոյ գուրս յեկավ գյուղացիներին խաղաղացնելու:

Ուլաններն առնված եին լեհական լեգեոնից, վոր գտնվում եր Բարնապուլում:

Նրանք բոլորն ել լավ ճանաչում եյին ալդ յերշկերը, լեռները և գյուղացիներին, վորոնց խաղաղացնելու եյին գնում: Նրանցից շատերն առաջ աշխատում եյին գյուղացիների մոտ գեռ թագավորի ժամանակ, վհրը մի տարի, վհրը յերկու:

Ուլաններից միքանիսն, անցնելով ծանոթ գյուղերով, բարեւում եյին գյուղացիներին:

Գյուղացիները լուս զարսանում եյին նրանց կարմիր անգրավարտիքների ու կապույտ՝ սպիտակ լերիգներով զարդարած՝ կուստիկների վրա:

Բայց վորքան նրանք հեռանում եյին քաղաքից և խորանում գաշտերի ու անտառների մեջ, այնքան ավելի ու ավելի յեր վոխվում նրանց բնավորությունը: Ժամանակ առ ժամանակ նրանց թվում եր, թե մի անհայտ ու նվաճված յերկրում եյին գտնվում իրենք: Յերբ նրանք մոտենում եյին, գյուղացիները սարսափում եյին, և ամեն ինչ մեռնում եր:

Ուլանները, նրանց հետ ել պրապորչիկ Վիսնեսկին, քաղաքից հեռանալով, իրենց այնպես եյին զգում, ինչպես զգում ե հոգնած ու քրտնած մարդը շոգ որին, յերբ մերկանում ե և ջուրը մանում: Այնտեղ՝ զավառական քաղաքի ցածրիկ տների մոտ, մնաց այն, ինչ վոր, իրենց կյանքի կեսի ընթացքում, նրանց վրա յեր զրել քաղաքը՝ և հարգանք, և զըսպածություն, և ուրիշ շատ բաներ, վորոնք մարդու հոգուն ստիպում են միշտ զգուշ լինել:

Այս բոլորը միանգամից փոշի դարձրին և քամուն տվին անծայր հին գաշտերը, անտառները, ճանապարհների նեղ ու խոտակալած ակուները և մարդկային կյանքին հրամայելու հնարավորությունը:

Նրանք բոլորն ել լավ, ընտանեկան շրջանում բարի մարդիկ են և համարյա բոլորն ել կին ու յերեխաներ ունելին, միայն պրապորչիկ Վիսնեսկին եր ամուրի ապրում:

Պրապորչիկը գնում եր առջեկց, մոխրագույն ձիու վրա նստած, և փոքրիկ կարկանդակի նման գլխարկը ծալած, ճրճվանքով խորը շունչ եր քաշում և իրեն հինավուրց ծերունի պահ: \*) յերեակայում:

Կարճ ու պինդ գավակ և յերկար և ուղիղ քամակ ունեցող նրբագուխ ձին ել եր իրեն լավ զգում և, մկանների խոնավ խիթերի հետ խաղալով, ընթանում եր թեթև ու հանգիստ:

Սկզբում ուլանները սահմանափակվում ելինողի մեջ կրակելով և ընթրիքի համար հավեր վրասալով բաց հետո այդ նրանց ձանձրացրեց, և նրանք սկսեցին բայլշեիկներ վորոնել: Տանուաերին դաշտն ելին կանչում և հարցնում:

— Ո՞վ ե բայլշեիկներին համակրում:

Յեվ վաչ թե այն զբուղումն ելին հարցաքննում, ուր կանգ ելին առնում, այլ հարկան: Տանուաերը ցուց եր տալիս: Այն ժամանակ ուլանները զնում ելին այնտեղ, ձերբակալում և մտրակներով ծեծում:

Բանված զբուղացիներն ուրիշներին ելին մատնացուց անում, և այսպիսով, զբուղից զբուղ անշնչով, ուլաններն իրենց յետեից իսկապես անմոռանալի հետքեր թողնելու հնարավորություն ելին ունենում:

Ուկեյից վոչ հեռու բռնեցին մի խօսկան բայլշեիկ մի դարբին, վորն տուաջ քաղաքում կարմիր-

\*) Հետ ազնվագան:

բանակալին եր լեղել և, հեղաշրջումից հետո, փախել եր գլուղը:

Դարբինը մի կարճահասակ ու ծուռուտն մարդ եր՝ լերկար ձեռքերով: Յերբ նրան տարան, նա շտապով աչքերն եր թարթում: Նա արտասվեց:

— Լալկմն, — արհամարհանքով առաց Վիսնեսկին: Վերջին որեւս նա արտասուք շատ եր տեսել և ցանկանում եր մի համարձակ և ուրախ մարդ տեսներ:

Դարբնին տարան նախրատափը և այնտեղ, պահուկի տնակի առաջ, սպանեցին:

Այդ նույն զբուղում, յերեկոյան, ուլանները ուրվոր գնացին և, յերբ վերագարձան, խորհրդավոր կերպով իրար աչքով ելին անում և հոհուում: Բայց այստեղ եւ ինչպես ամենուրեք, վոչվոք չեր գանգատվում:

Ուշ յերեկոյան միայն պրապորչիկը նրանց խոսացության մի հատվածից հասկացավ, վոր նրանք աղջիկներ ելին բռնաբարել: Այդ տեղեկությունը նրա մեջ տհաճության և միհնույն ժամանակ ուրախության տրամադրություն առաջացրեց:

Տհաճ եր այդ այն պատճառով, վոր քաղաքում այժմ բռնաբարությունը գնդականարությունից ել քիչ ելին սիրում, և նա դրա համար կարող եր լուրջ հանդիմանություն ստանալ, իսկ ուրախ այն պատճառով, վոր նա վաղուց եր ցանկանում ալստեղ՝ այս ընդարձակ տարածության մեջ՝ գրկել մի պարզ, իրենից հացի հոտ բռնըդ, զեղջուկ աղջիկ, իսկ յեթենա անձնատուր չլիներ, ապա՝ բռնաբարել:

Պրապորչիկը կարծում եր, վոր բռնաբարություն ատողները բոլորիք ան խաբում են թե իրենց և թե ուրիշներին:

Հետեւալ որը հասան Ուլեյա: Միլիցիոներների  
սպանությունից անցել եր ուղիղ մի շաբաթ:

Դարձյալ այնտեղ կանդնած ելին սոսու խրճիթ-  
ները, դարձյալ ծիածանազույն փալվիլում ելին պա-  
տուհանների բորբոսնած ապակիները, և փողոցը մութն  
եր, ոով և նեղ՝ ինչպես սիրիյան վերնաշապկի ծալ-  
վածք:

Գյուղացիներն արտերում ելին: Վիսնեսկին  
խստությամբ հրամայեց տանուտերին հավաքելնը անց  
յերեկոյան դեմ, իսկ ինքը պառկեց ծածկի տակ, սայ-  
լի վրա և քննեց:

Ուլանները տանուտերի վոչխարներից մեկը մոր-  
թեցին և սկսեցին բակի մեջտեղը խորովել այս: Խա-  
րուցից կատծեր ելին թոշում: Տանուտերը վախենում  
եր հրգեհից, բայց քաղցրությամբ ժպտում եր և դան-  
դադ պտտիում ուլանների շուրջը:

Թևերով իրեն ուժ տալով՝ բարձր ու վանդակա-  
վոր պատճեղի վրա թռավ մի աքաղաղ և ծուզուղու  
կանչեց:

Ուլաններից մեկը նշան բռնեց և գնդակահարեց  
նրան: Աքաղաղը, հասած պտղի նման, թրփաց գետին:  
Ալսեղել տանուտերը քաղցրությամբ ժպտաց և ասաց.

— Սպանեցիք, հա:

Ուլանը նայեց կեղծավոր ծերուկին: Նա ուղում  
եր հրացանազարկ անել և արդ, սփոռոցի պես հարթ  
կուրծքը: Նա ցած դրեց հրացանը:

Յերեկոյան դեմ գյուղացիները հավաքվեցին:  
Պրապորչիկը նրանցից տասին՝ տեսքով ամենաահար-  
կուներին՝ ջոկեց, հրամայեց խրճիթում բանտարկել  
նրանց և պահակ կարգել:

Մնացած գյուղացիներին ուղանները ծեծեցին և  
արձակեցին:

Պրապորչիկը տանուտերին հարցրեց.

— Իսկ նրանք, սպանողները, թագնվել են:

— Այո, — շտապկոտ պատասխանեց տանուտերը:

— Յեկ չես իմանում, թէ վորտեղ:

— Զեմ կարող իմանալ:

Պրապորչիկը դուրս արեց տանուտերին և հրա-  
մայեց ուսուցչին կանչել:

— Նստիր, — տաց պրապորչիկը Կոբելկ-Մալի-  
շևկուն, — շատ ուրախ եմ, վոր ծանոթանում եմ քա-  
ղաքակրթված մարդու հետ:

Պրապորչիկը գյուղական ուսուցչիներին չեր սի-  
րում. նրա կարծիքով՝ նրանք գյուղացիներից տար-  
բերվում ելին միայն իրենց ածիլված միրուքով, Ալդ-  
պես ել նրան զուր չեր գալիս այդ թույլ ու շվարտծ  
մարդը:

Պրապորչիկը Կոբելկ-Մալիշևկուն հյուրասի-  
րեց մանջուրական սիդարեթով և հարցրեց.

— Դուք բնչպես եք այս վորդում ապրում:

— Վարժվել ենք:

Կոբելկ-Մալիշևկին զգում եր իր ամոթխածու-  
թյունը և քաշվում եր: «Այ թէ վայրենացել եմ»,  
մատեց նա և շունչը պինդ ներս քաշեց, բայց, խոր  
շնչելով, խոփաց, և հազը հաղթեց նրան:

— Ե՞, — անվատահությամբ ասաց պրապորչի-  
կը, — չեմ կարող հավատալ, վոր կարելի է այսպիսի  
տեղին վարժվել Հավանտկան ե, վոր դուք ուրիշ  
պատճառներ ունեք:

Կոբելկը կարծեց, թէ պրապորչիկը, գուցե, կաս-

կածում ե, վոր ինքը կապ ունի բայլշկիզմի հետ, և շտապով ասաց.

— Մայրս իմ խնամքի տակ ե, ինչպես և փոքրիկ յեղբայրս, իսկ քաղաքում, գիտեք, ապրելը դժվար է: Այժմ դեպի գլուղն են ձգտում:

— Այն, քաղաքում դժվար է: Հասկանալի յե:

Պրապորչիկը մտածում եր, թե ինչի մասին խոսի և հարցը եց.

— Իսկ գյուղացիները ձեզ չեն նեղացնում:

— Ի՞նչ ասեմ... Առանձնապես չե... Հայտնի յե, տայգա յե, ժողովուրդը, դե ինքներդ գիտեք, ելի:

— Շրջմոլիկներ են ձեղնում ամենքը և խաբերաներ:

Պրապորչիկը հոնքերը վերև քաշեց:

— Այստեղ դեռ շատ արյուն կթափվի:

— Շատ, — շապով համաձայնեց ուսուցիչը:

— Իսկ դուք ինչպես, այստեղ ներկա չեյք... անկարգության ժամանակ:

— Վոչ, պատեհություն չունեցա:

— Իսկ ով սպանեց, չգիտեք:

Ուսուցիչը կարծեց, թե ծածկելու կարիք չկա, առանց այդ եր հավանականաբար, գյուղացիներն արդեն ասել են: Նա ատաղձագործների ու Սելիզնովի անունը տվեց: Պրապորչիկը ելի միքանի հարցեր տվեց և ապա ազգանունը հարցրեց.

— Կորելու Մալիշևի, — պատասխանեց ուսուցիչը:

— Տարորինակ ազգանուն ե, — զարմացավ պրապորչիկը: Յեվ այն ժամանակ ուսուցիչն սկսեց մեկնարանել, թե ինչ ճանապարհով և կազմվել այդ ազ-

գանունը: Պատմության վերջը նա, ինչպես միշտ, ինքը հուզվեց և, ինչպես նրան թվաց, հուզեց նաև պրապորչիկին: Վիսնևսկին համակրությամբ սեղմեց նրա ձեռքը և ծոր սալով ասաց.

— Այս, քաղաքակիրթ մարդու համար այստեղ ապրելն անտանելի յե:

Ուսուցիչը հայնոյեց գյուղացիներին, հիշեց ատաղձագործներին, նրանց ել հայնոյեց և, ձեռքը՝ մատները չուած՝ դեպի պրապորչիկը մեկնելով, ասաց.

— Հինգ հոգի յեն, բայց պետության դեմ են գնում: Բվեճի նման բարձրացան Սմոլնի սարը և կարծում են՝ կգնան:

— Ո՞ւր, — աշխուժանալով հարցրեց պրապորչիկը:

Ուսուցիչը հանկարծ հասկացավ իր սխալը:

— Ներեք ինձ, — ասաց նա գունատվելով:

Պրապորչիկը հոգատարությամբ անցավ վերնատան միջով և, մոտենալով ուսուցչին, բռնեց նրա մեջքը:

— Վոչինչ, — ասաց նա, — հանկարծակի դուրս թռավ բերանիցդ, վոչինչ, իս ձեզ չեմ մատնի: Յես հասկանում եմ: Միայն թե այնպես լինի, վոր դուք գյուղացիների հետ այլ կերպ ապրեք: Այդ լավ կլինի:

Ուսուցիչը, տանուտերի տանից դուրս գալուց հետո, վախեցած ու տալակուսած հարցնում եր ինքն երեն:

— Այս քեզ հիմար... այ հիմար... Դու այդ ինչպես, հը՞, ինչպես...

Յեվ մութ ու վտանգավոր մտքերը շարժվեցին նրա ուղեղի մեջ:

Քիչ անց՝ պրապորշիկը տանուտերին կանչեց և  
խստությամբ ասաց.

— Վաղը դու ինձ կտանես Սմոլնի սարը: Հեռու  
յե այստեղից: Տես, յես քարտեզ ունեմ, չխարե՞ս:

Տանուտերը կակազելով ասաց.

— Տասը... վերստ ե...

Պրապորշիկը սրտահույզ մտածեց.

— Այստեղ են... Չեն ազատվիր:

Ապա բարձրածայն ասաց հպարտությամբ.

— Իսկ առայժմ քեզ ձերբակալում եմ, հասկա-  
ցմք: Այստեղ նստիր ու չշարժվես:

Տանուտերը նստեց և կոնատակը քորեց: Նա  
ինքն իրեն մի բան շնչաց և մտածեց.

— Տղան գլուխս աղը դըեց:

Պրապորշիկը մաքրեց ձախ թէկի վրալի փոշո-  
տած ազգային նշանը և հրամակեց դենշիկին.

— Ընթրիք պատրաստիր:

Այն որը, յերբ պրապորշիկն, ուլանների ճետ,  
գնում եր Սմոլնի սարը՝ խոռվարար զյուղացիներին  
բռնելու, այն թագնվող հինգ մարդն ել, չորս ատաղ-  
ձագործը և ուլելցի Անտոն Սելեզնյովը, գնում ելին  
վոչ թե Վոսկրս լճի կողմից, վորտեզից ուլաններն  
ելին տռաջանում, այլ արեկելքից՝ կաղամախիների  
ճկուտի կողմից:

Արել ծագելիս դեռ տոթ եր:

— Անձը և ե գալու, — ասաց Սելեզնյովը:

Գնում ելին իրար յետելից, սադի նման: Խոռը  
մինչև բկատակերն եր հասնում: Նրանց վոտքերը  
կպչում եր արգավանդ խոնավ հողին: Նըբորեն բու-  
րում եր նեղատերն ամբխոռի ու բաց-կանաչ խորու-

ների հոտը: Վայրի յեղինջը փաթաթվում եր նրանց  
վոտքերին:

Ծերությունից կոացած ու քամուց կոտրատված  
կաղամախիները հենվել ելին խոտակույտերին, և  
նրանք, ստիպված, անցնում եյին այդ ծառերի ուա-  
կով, ինչպես անցնում են դարպասով:

Կուբդյան կորցքել եր ճկուտներով քայլելու ու-  
նակությունը և հայնոյում եր:

— Ալատեղից մեղուն ել չի կարող թոշել, մըր  
մաց մարզը, լճի միջով գնալ կլինի:

Սելեզնյովը յետ դարձավ ու ասաց.

— Տես, տղա, փո՞ւշ չդուրս դա:

— Ինչո՞ւ:

— Այն տեսակի մարդիկ են թափառում: Հրեն  
լեհերը Ուկեյա յեկան: Գյուղացիներին ասում եյի,  
հա՛յդե, դեպի սարերը: Չելին ուզում: Դե, այժմ բան-  
տում նստեք:

— Յեթե միայն բանտում, — գոռաց լետեից լե-  
կող Բեսպալիխը, — կարող են և գնդակահարել:

Սելեզնյովը ձեռքն արագ շարժեց և մի բռո  
բռնեց:

— Բոռը նիհար ե, — ասաց նա, — տաք ձմեռ ե  
լինելու:

Բեսպալիխն ափսուանքով բացականչեց.

— Ա՛յ, ինչ լավ կլիներ, վոր վար անեյինք,  
սրտներիս ուզածի չափ վար անեյինք: Իսկ դու կըո-  
վել ես ուզում:

Կուբդյան արհամարհանքով խոժողվեց.

— Մի մոթմոթա, Բեսպալիխ, շատախմա:

Սելեզնյովը սողալով անցավ կախամախու փտած

և գալուկներով փաթաթված կմախքի միջից։ Կմախքը փշրվեց, և կինամոնագույն փոշի բարձրացավ։ Սելեզնյովը գլխարկն ու ցանցը հանեց ու գլուխը թափտվեց։

— Այս, հղակ, ամբողջովին քսվեցի։ Տպերք, վոտքերիդ տակը նայեք, այստեղ այնպիսի փոսեր են պատահում, վոր ընկնող մարդը չի կարողանում դուրս գալ, նրա գերեզմանն ե դառնում։

— Դնդակահար լինես։

Նրանք հասան բացատը՝ հողնած, քրտնած և կաղամախու փետրիկներով պատած։ Այդ պատճառով ել նրանց միրուքներն սպիտակել եյին, և նրանք ծերունու կերպարանք ելին ստացել։ Այստեղից սարը բարձրանալը հեշտ եր։

Շուրջը տարածված եյին՝ յեղենին, յելտը և անցյալ տարվա կտրվածքների սև կոճղերը։ Վորտեղ հրդեհը շատ եր բոնել, այնտեղ աճել եյին կաղամախին ու կեչին՝ նորահաս ու գեղաժայիտ։

Կոկուալով և հեռվից կարմրին տալով՝ մի վայրի բադ անցավ կեչու ծառերի կատարների վրայից։

— Դեպի ջուրն ե թռչում, — ասաց Սոլոմինիխը՝ աչքով նրան հիտեւելով։

Գնալիս Թորբուլինին թվում եր, թե յեղերուի յետերից են գնում։ Այժմ նա ճմճկուաց, և նրա նեղ ու քնատ աչքերը փայլեցին։

— Շնուտ կհասնենք, — հարցրեց նա։

Բեսպալիխը ծիծաղեց։

— Ի՞նչպես չե, փափուկ անկողին ել կգտնենք։

— Ի՞նչ ես հոտում, պոչատ ավանակ, — վիրավորվելով ասաց Թորբուլինը։ Հոգնած ժամանակ նա հաճախ եր վիրավորվում։

Կուբդան խստությամբ նայեց և ասաց.

— Տղերք, — այստեղ մինք տուն չենում, այլ մեր կանքը։ Հարկավոր ե ուշադիր լինել, կովելու կարիք չկա։

Մերելքն ավելի ու ավելի դժվարանում եր։ Մալրիների ու մուգ-կանաչ յելատների մեջ պատահում երին դեղին բացատներ՝ ծածկված ավազով, ճաւքարերով ու քարակույտերով։ Յերբեմն նրանց հանդեպ ցցվում եր մամուռով ու քարաքսոսվ պատած վորեւ ժայռ։

Քամին փչում եր քարակույտերի վրայով։

Սելեղնյովը գլխարկը հանեց։

— Քրանել եմ ինչպես ձիթահանքի ձի, — ասաց նա և, թէը պինդ սեղմելով յերեսին, սրբվեց։

Քարակույտերի վրայով, միմյանց յետերից, անցնում եյին հողմերը, ճոճելով փշատերև ծառերը։ Սելեղնյովը յերանությամբ ժպառում եր։

— Այս ել անձրեսի նշան ե, տղերք։ Այս տարեւակ բերք կլինի...

Նա լեղվով շպացրեց։ Կուբդան հուզված ու հաճույքով զգաց նրա գլուղացիական ծանը ուրախությունը։ Կուբդյալին այդ գուր չեկավ, և նա թռւացավ ու հոգնած ճանով հարցրեց։

— Զհանգստանանք։

— Կարելի յե և հանգստանալ։ Այստեղ, մալրու յետեւում տեսարանը լավին եւ չափե։

Նա գեպի ձախ թեքվեց։ Անցան սոճիների գեղին, կասես, մոմից շինած, բների մոտով։ Դուրս յեկան մի փոքրիկ, քարոտ, տափակ, զյուղական յերկու յեկեղեցու գավիթների չափ տեղ։ Կուբդյան ցած դրեց տոպրակն ու հրացանը և «ո՞հ» ասաց։

— Այս, մեր կողմը, — հարեց Սելեզնյովը՝ բանալով աղի տոպլակը, — տեսնում ես, աղն ել և թացացել:

Կուբդի սրտի սարսուռը չեր գաղարում:

Սելեզնյովը ծանրաքայլ մոռեցավ Կուբդին:

— Աղի, թելը հասկը ե: Ի՞նչ ես նայում այդ քարոտին: Քար ու քար: Վոչ մի կարգ չկա և դրան ասոված ե հրամայել, վոր այլևս չաճի: Ի՞նչքան վարեկատեղ ե կորել այլ քարերի տակ:

Անտոնը սրահայց ցած նայեց արահետի ուղղությամբ և կոշիկով թեթև հրեց Կուբդին:

— Տեսնում ես, — ասաց նա շշուկով:

Կուբդան չհասկացավ:

— Հը:

Սելեզնյովը քաշեց նրա թեից և ինքն ել արագ պառկեց փորի վրա:

— Ահա հրեն, դեպի ձախ, նայիր:

Կուբդի ձայնը թուլացավ:

— Մարդիկ են..., Գագմթին...

— Լեհերն են, — ասաց Սելեզնյովը և սողալով հեռացավ: — Տեսնում ես, կարմիր անդրավարտիքները:

Նրանք չորեքթաթ միջանի քայլ սողացին և բերդանկաները վերցրին գիտնից:

— Լեհերն են, — ասաց Սելեզնյովը ատաղձագործներին: Հանգցրնե...

Բեսպալիխը կատաղած ցրվեց կրակը և սկսեց ածուխները կոշիկներով կոխրձել:

— Թեև իմեկ ել չթողեցին, կրակ ընկնի դրանց փորը... Ի՞նչ անենք, ճկուտը գնանք...

— Էստ իս ճկուտը գնանք, — ասաց Գորբուլինը

— Ո՞ւ՞ն-ո՞ւ...

— ...Ո՞ւ-ո՞ւ-ո՞ւ—արձագանք տվեց հեռվում:

— Այս տեղ, — ասաց Կուբդյան, — մարդու աչք նայելուց ցավում ե...

Յեվ նա, քիչ թեքվելով, կարծես ցատկելու պատրաստվելով, նայում եր այդ գեղեցիկ տեսարանին, մինչև վոր Սելեզնյովը գնաց մի տեղից ջուր գտնելու, իսկ Գորբուլինը խարույկն եր փչում:

Հեռվում, ցածը, լեռների մեջ սեղմված, տարածած եր վոսկե լիճը: Նա կապույտ եր, գեղնավուն ցուքով՝ ինչպես լեռների վրա ձգված մի յերկար ու փայլուն գոտի: Փրչոտ յելատներն ու մալլիները շըր ջապատել եյին լիճը, վորի յետեռմ բարձր ու գունատ յերկնքին ելին կպել սպիտակափառ գաղաթներն իրենց սպիտակ ժանիքներով:

Իսկ նրանց շուրջն ամենուրեք անտառ եր, ջուր ու քար:

Կուբդյան պառկեց փորի վրա ու նայում եր ցած:

Մի վարկլան նա զգաց, վոր ինքն այդ քարի հետ միասին և աճել: Մի սարսուռ անցավ նրա որրոտով: Բացատը քանդված եր, և այդ վլվածքի յերկարությունը մոտ հարյուր հիսուն սաժեն եր, ապա գալիս եյին յելատուտը, լիցքերն ու քարերը: Յելատուտի յետեռմ լիճն եր:

Բացատի մեջտեղից գեպի վեր ձգվում եր մի արահետ: Յերեք մարդ հազիկ կարողանալին անցնել, այնքան նեղ եր այդ արահետը:

Կուբդյան դարձավ գեպի Սելեզնյովը և կանչեց.

— Անտոն, չե՞ վոր այս ճանապարհը, լեռների միջով, գեպի մեր կողմի և տառնում:

և իսկույն ավելացրեց, — գյուղացիները մեզ մատնել են:

Լեհերն արահետով դանդաղ, մեկը մյուսի յիտեից, բարձրանում եյին և ուրախ զրուցում:

Առջեկց գնում եր տանուտերը՝ նստած մի կարճ-լիկ ու հաստափոր ձիռ վրա:

Նրա լետեից, դորշ ձիռ վրա նստած, գնում եր մի զինվոր՝ գուցե, մի սպա՝ առանց հրացանի, Քամին անհամբեր սանրում եր ձիերի բաշը: Սպան հա-ճախ շուրջն եր նայում և նույնիսկ միքիչ բարձրա-նում թամբի մեջ: Բայց նա գյուղացիներին վերևում չեր նկատում:

Անտոնը մոտեցավ և կպավ Կուրդին, այնպես վոր նրա միբուքը քսվում եր տառաղձագործի ուսին: Իր միբուքը կծելով, ասաց.

— Դու նրան... յերբորդին... յեռ արդեն... սպա-լին...

— Իսկ ծերժովը,

— Ծերուկը, իզուր, նա... թակարդով, պիտի...

Հը...  
— Խղճում եմ մարդուն... սովոր չեմ յեռ...

— Դե կթայիր ելի... մարդ սպանելուց հեշտ բան չկա...

Սելեզնյովը ձեռքը դրեց նրա գոտկատեղը և քաղցրությամբ ասաց.

— Վերցրն, ի՞նչ կա վոր...

Կուրդիան միքիչ թուլացավ, հրացանը բարձրաց-րեց և նշան բռնեց:

— Ե՛, աստված նրա հետ, — ասաց և կրակեց:

Յերկու ձին ու յերկու մարդը նախ վեր ցատկե-

ցին՝ հողմառ թղթի կտորների պես, ապա, ողի մեջ գլորվելով, ցած ընկան արահետից:

Մեկը սուր ճչաց արահետում:

Բեսալալիխը թռավ քարի գլուխը, կռացավ և նույնպես կրակեց: Լեհերը դանդաղ յետ-յետ եյին գնում. ձիերը խորդում եյին, իսկ գյուղացիները, ինչպես կատաղած գայլեր, թրջված, գունա՛տ, կրա-կում ելին ու կրակում:

Տանուտերը տուաջ քշեց իր ձին, բայց ձին դող-դողաց, ընկավ և ցած գլորվեց հեծվորի հետ միասին:

Յերեկոյան, իլոռք, անձրև յեկավ:

Գյուղացիները մի մեծ խարույկ վառեցին յելա-տի տակ և չորացրած ձկից շորվա լեփեցին: Մութն եր: Փշատերեկ ծառերն այնպիս եյին կպչում նրանց, վոր, կարծես, մատներով շոշափում ելին: Նրանց ճու-ղերը խշխշում ելին:

Վորոտը թնդաց, ապա դեղին շանթը մեխվեց լեռներին: Քարը գլրդում եր:

— Ձեղոր-ամառնայինի վրա փոթորիկ ե, — ծուլու-թյամբ ասաց Սելեզնյովը, — հացի բերքը վատ կլինի:

— Իսկ մեզ ինչ, — հարցրեց Գորբուլինը, — մենք հայ չենք հավաքելու:

Սելեզնյովը, կարծես, թախծոտ պատասխանեց:

— Մենք հավաքելու չենք, այդ ճշմարիտ ե...

— Ճշմարիտ ե... — հարցրեց Սոլոմինիխը:

Կուրդյան նայեց մսի այդ յերկու սկ կտորին՝ Սոլոմինիխին ու Սելեզնյովին, և նրա տրամադրու-թյունը փչացավ:

— Հողին եք ափսոսում, ի՞նչ ե, — հարցրեց նա խիստ կերպով:

— Հողը, տղա՛, չի կարելի զուր տեղը զցել:  
Պետք է իմանալ թե ի՞րբ և հարկավոր զցել այն,—ա-  
սաց Սելեզնյովը հաստատակամ:

— Ե՛, նրան սիրելու պատճառ ել շատ չկա:  
— Հողը սիրելը աստծուց է կարգադրված:  
— Մի սար. աստված իբրև պատիժ և հողը  
մարդկանց տվել, — զուաց Բեսպալիխը, — աշխատե՞ք,  
ասում ե, ձեր մա՛լըն այսպես:

Սելեզնյովը համառությամբ կրկնեց.

— Դու, Բեսպալիխ, կամակորություն մի անի:  
Գուցե աստված ուղիղ չի ասել: Միայն թե հողը...

— Հը...  
Սելեզնյովը ածուխը վերցրեց և ծխեց:  
— Կուբդան, գլխումս ամեն ինչ պատորվել ե...  
— Լեհերքն ես խղճում:  
— Զե-ե... Մարդուն խղճակ, Քնչ և մարդը, միշտ  
ել կարելի յե մարդ շինել: Մարդը փոշի յե: Բայց  
մենք այստեղ ապահով չենք, ահա թե ինչ:  
— Ո՞ւմ կողմից:  
— Գյուղացիների:

Կուբդյան զայրացավ: Քիթը բարկացած շարժե-  
լով՝ նա կուացավ կաթսայի վրա և գդալով խառնեց:  
— Ինչի՞ս կատակն ե:  
— Առանց գրան չի կարելի:

Կուբդյան նայեց նրա անշարժ մաղերի մեջ  
թաղված աչքերին ու կարծես խեղդվելով, ասաց.  
— Յես տերտե՞ր եմ, ինչ ե:  
— Գուցե տերտերից ել ավելի յես:

— Դե գնա:  
— Տղերք, հարկավոր և հաշտ ապրել, իբրա լով  
մտիկ տալ, հասկացմաք:

— Իզուր տեղն եմ հեռացել ինչ ե: Յես կողոպ-  
տում եմ, կողոպտիչ եմ...

Նրանք դանդաղ ելին խոսում, ուժով:  
Կողմանակի՝ տնտեսության հետ կապ չունեցող՝  
մտքերին անվարժ ուղեղները լավ չեյին հնազանդ-  
վում, և լուրաքանչյուր միտք ներսից ցավող, մսին  
կապած եր զուրս քաշվում, ճիշտ այնպես, ինչպես վոր  
դուրս են քաշում կեռը կարթին ընկած ձկան կոկորդից:

Բիսպալիխը տակի սպիտակեղենով, սպիտակ  
մարմարով և լուցկու նման գեղնավուն գլխով՝ անդրա-  
վարտիքի վոզիկներն եր ջարդում ու սուլելով ինչ-վոր  
բան եր յերգում:

Կուբդյան ձեռքով նրան ցույց տվեց ու ասաց.

— Ահա, ապրում ե ու վոչինչ կորցնելիք չունի.  
իսկ զու, Անտոն Սեմյոնիչ, տանջվում ես. տանից բա-  
ժանվելու այնքան ել հեշտ չի:

— Կարելի յե տասը տուն շինել, միայն թե ժա-  
մանակ լինի...

— Հա...  
— Իսկ այժմ չգիտեմ, թե ինչ...

Սելեզնյովը անհարմար բարձրացավ, կասես թե  
յեխի միջեց եր մագիլներով զուրս գալիս և գնաց դե-  
պի խավարը:

— Ո՞ւր, — հարցրեց նրան կուբդյան:

— Հենց այնպես... զուք քնեք, իսկուն կգամ:  
Սոլոմինիին ափսոսանքով ասաց.

— Անհանգստանում ե մարդը:

— Նրան չեմ հասկանում:

— Քո հոգին քաղաքային ե, զուր չե, վոր տա-  
րիներով ապրել ես քաղաքում:

Սոլոմոնիխը գդալները հանեց ու սկսեց հացը  
կոտորել:

— Այժմ ժողովաւրդը մնզ մոտ կթափվի, — գո-  
հունակությամբ ասաց նա՝ գանակը հացի կեղեին խը-  
փելով:

— Վճրուեղից, — հարցրեց Գորբուլինը:

— Սովորությունն այդպես է: Տեսնելով, վոր  
դրծն սկսեցինք, ինչպես հարկավոր է:

Բեսպալիխն անդրավարտիքը հագնելով ասաց.

— Իսկ լստ իս, բերդանկաները կվերցնեն, մեզ  
կըսնեն ու կտանին քաղաք, Այս վոջիլ ու անիծ են  
հավաքվել վրաս, ո՞ո...

— Վախենալուց ե:

— Գուցե վախենալուց ե:

## VII

Հեհերի կոտորածից հետո սկսեցին զորամասը  
լրացնել:

Գալիս ելին մեծ մասամբ Ռւելելի հարևան զլու-  
ղերից: Գլուղացիները վախենում ելին քաղաքացինե-  
րի վրիժառությունից և գալիս ելին իրենց կանանց  
ու բերեխաների հետ, բերում ելին իրենց տան կա-  
րասիները, Պատահում ելին և հեռավոր գյուղերից,  
համարյա բոլորն ել գերմանական պատերազմի զին-  
վորներ: Մրանք հետեակ ելին, մաղխաղներով ու բեր-  
դանկաներով: Միքանիսը նույնիսկ վինտովկաներ  
ունելին:

Կայանը տեղափոխեցին Լուղարնի սարի ստորո-  
տը, ճկուտի խորքը և ալստեղ վրաններ խփեցին:  
Մըդեն կես հարյուրյակ մարդ կար:

Սելեզնյովը հանդիպելով կուբդին՝ ասաց.

— Հարկավոր ե պետ ընտրել:

Վերջին որերը կուբդան, կարծես, յերկարելեր.  
Նրա ըերանի անկյունները կախվել ելին: Գուցե նը-  
րան մի տառնձին տեսք եր տալիս գոտկից կախված  
ատրճանակը, վոր սպանված լինի վրալից եր վերցրել:  
Կուբդան համաձայնեց, ու ընթրիքից հետո ժողով  
նշանակեցին:

Կուբդյան բարձրացավ սալլը: Գլուղացիները  
նստեցին կանաչ խոտի վրա ու սկսեցին ծիսել: Կուբ-  
դյան ուղղում եր կանգնած խոսել բայց միտքը փո-  
խեց և գլխարկը հանեց միայն:

Հինգվեց սալլ կալին ալնտեղ, վորոնք ծածկված  
ելին մայրու ճյուղերով: Անձրեկց պաշտպանվելու հա-  
մար ելին այդպես ծածկել ու պատսպարան դարձրել:  
Սալլերի արանքին թափառում եր մի սպիտակափոր  
շան ճուտ, իսկ այդպայից խեժի հոտ եր փչում: Թը-  
շան վում եր, թե զյուղացիները խոտեարքի կամ կաղին  
հավաքելու յեն յեկել:

Ամենից վերջը չոքել եր Բեսպալիխն ու Ժպտում  
եր եր փոքրիկ մատնոցի նման բերանով:

Կուբդյան առում եր.

— Ընկերներ... Հայտնի յե, թե ինչու յենք մենք  
հավաքվել այստեղ, ել ձեզ պատմելու կարիք չկա.  
Վոչկոքի չեն ստիպել, այլ ամեն մարդ իր բարի կամ-  
քով ե յեկել... Մենք բոլորս մեկի գեմ ենք. կուչա-  
կյան հին ոեժիմի կառավարությունը մեզ հարկավոր  
չի, մենք մեր զյուղացիական իշխանությունն ենք ու-  
ղում: Մենք հո գալլ չենք, վոր ամեն մի վորսորդից  
վախենանք: Մենք ել ուժ ունենք, սակայն, բացի սը-  
վախենանք:

բանից, Ուրալի այն կողմից խորհրդային բանակն ե  
գալիս: Պետք ե գիմանալ և հետո ինչ կլինի, կպարզ-  
վի: Այդպես... իսկ այժմ հարկավոր ե պետ ընտ-  
րել, վորովհատե նույնիսկ վոչխարն ե իր նոխազն ե  
ունենում, վոր առաջնորդի:

Գլուղացիները հոհուացին:

— Միտք արի, միտք, — շարունակեց կուրդյան, —  
դե մի մարդուց բացի, ուրիշը չունենք: Բայց վորով-  
հետեւ հարկավոր ե թեկնածուներ նշանակել, ապա իմ  
ձայնը տալիս եմ Անտոն Սեմյոնովիչ Սելեզնյովին:

— Իսկ իմը՝ կուրդին, — ասաց հետապալիխը:

Մեկն ել Սոլոմինիսի անունը տվեց, Սոլոմինի-  
իը գորգուաց.

— Իմ ի՞նչ բանն ե, յես կնկանս հազիվ եմ կա-  
ռավարում:

Գյուղացիները յերկար ճվճիռմ եյին, ինչպես  
սովորաբար լինում ե գյուղական ժողովում: Ապա ձեռ-  
քերը բարձրացըին: Մեծամասնությունը Սելեզնյովի  
կողմն եր: Սելեզնյովը թունդ կարմրել եր: Բեսապալիխն  
ասաց.

— Միրուքը կխանձվի:

— Զգո՞ւշ, տղերք, — բարեհոգությամբ ծիծաղում  
եր Սելեզնյովը, — յես այժմ պետ եմ:

Բայց նա հանկարծ սեղմեց շրթունքներն ուսակ-  
լերի արանքով արագ գնաց գեպի գետը:

— Ուր ե գնում, — տարակուսանքով հարցրեց  
կուրդյան:

Սոլոմինիսի նայեց կեչուտով գնացող Սելեզնյո-  
վին և պատասխանեց:

— Մարդս արջի հոգի ունի, իր ճամպան յերբեք  
չի գտնում:

Յերեկոյան դեմ նըանց բանակը յեկավ Ուլելի  
ուսուցիչ կոբելե-Մալիշեկին:

Նա բոլոր գյուղացիներին բարեկց, ձեռքը նը-  
րանց տալով ու նստեց կուրդի կողքին:

— Յես ել ձեղ մոտ, — ասաց նա՝ իրեն համար  
անսպասելի:

Գալիս նա մտադիր եր միայն տեսնել նըանց  
լագերն ու վերագանակ նըա գլուխը գեպի առաջ եր  
ձգվել կարծես թե ուզում եյին մորթել: Կուրդյան  
